չինութեան տաճարին Ս. Յարութեան ; զի տացեն Հայք զրաժինս իւրեանց. պատասխանի եւուն և ասեն՝ մեք ոչ դիտեմք, այլ Պատրիարքն և ազգն մեր. Դատաւորք ասեն՝ ուրեմն ստուգեցէք 'ի նոցանէ և գրով ծանուցէք մեզ, զի տացեն Հայք։ Ասացին Յոյնք, Հայք միայն ուխտին բաժանորդ են և ոչ տիրելոյն։ Այսոքիկ բանք ծանր թուեցան Ատենակալաց, նմին իրի կշտամբեցին զնոսա և ասեն՝ ապա դուք զի՞նչ իցէք, ո՛չ ապաքէն ընդ նոսին հաւասար ուխտաւորք, զի երկիրն Արքային է, և զերկասին ազգդ հաւասար ճանաչէ նա, չունիք տեղի խրոխտալոյ 'ի վերայ միմեանց՝ Յոյնք անդէն լռեցին, չունելով զայլ պատասխանի։ Հայք ասեն՝ արդարեւ սոյն այս բարեկամք մեր չինեցին զՍ. Յարութիւն և յարդարեցին զտեղիս իւրեանց փառաւոր և վայելուչ, իսկ զտեղիս Հայոց յամենայնի պակաս և խանդարեալ, և ըստ ամենայնի հակառակ առաջին ձեւոյն, առ այս զի՞նչ հրաման առնէք. Դատաւորք ասեն՝ պակաս տեղիքն Հայոց լրասցին, և հակառակ շինուածքն քակեսցին և կարգեսցի Միւվելլա քննել ըզշինութիւնն և դարձուցանել զայն 'ի ձեւն առաջին։ Եւ 'ի վախճանի ժողովոյն՝ ասաց Տեղապահն, տեսէք զտուսմար ծախուց շինութեան և 'ի միջի ձերում իրաւախոհ լերուք, փակեցաւ Ատեանն։

Հայք ուրախութեամբ եւ զուարթ դիմօք մեկնեցան անտի, իսկ Յոյնք ընդ հակառակն և խորհրդականք նոցին ժողովեալ խորհէին զտանել զելս իրաց, զի զամօթի հարան ազգովին, և փութացին 'ի դրունս մեծամեծաց շրջել կամելով զմիտս նոցա և զԱրքայի, խոստանալով զմեծ գումարս ոսկւոյ, որչափ և կամեսցին, այլ ոչ ոք համարձակէր յայնժամ մերձենալ առ նոսա վասն այնպիսի իրաց, երկուցեալ 'ի պատուհասիցն Արքայի։ Իրրեւ տեսին Հայք թէ ոչ զիջանին Յոյնք խօսիլ ինչ վասն ծախուց՝ և եղեալ են 'ի մտի չընդունել զայն, կոչեցին զերկուս ոմանս 'ի գլխաւորաց նոցին, և բանս արկեալ խօսեցան քաղցրութեամբ հոգալ և տնօրինել զայն 'ի միջի իւրեանց ըստ հրամանի Արքային. և նոքա ծանուցին զայն խորհրդարանի իւրեանց. սակայն և ոչ պատասխանի տալոյ արժանի վարկան։ Էանց ամսօրեայ ժամանակ, և 'ի Նախարարաց